ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի նոյեմբերի 21-ից 24-ը

Ռուսաստանի Դաշնություն (ք. Կազան) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը Ազգանունը՝**

   Տիգրան Գաբրիելյան, Արամ Սայամյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության պետի տեղակալ,

   ՀՀ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության ապրանքների դասակարգման և սակագնային կարգավորման բաժնի գլխավոր մաքսային տեսուչ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Ռուսաստանի Դաշնություն, ք. Կազան, նոյեմբերի 21-ից 24-ը

4. **Հրավիրող կողմը՝**

   ՌԴ ՖՆ դաշնային մաքսային ծառայություն

5. **Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝**

Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիային (այսուհետ՝ ԵԱՏՄ ՄԾՄԿ) կից՝ ապրանքների դասակարգման հարցերով աշխատանքային խմբի հերթական՝ 46-րդ նիստին մասնակցություն:

6. **Քննարկված թեմաները՝**

   ԵԱՏՄ ՄԾՄԿ կից՝ աշխատանքային խմբի 46-րդ նիստի օրակարգերում ընդգրկված մի շարք ապրանքների (հիբրիդային տրանսպորտային միջոցներ, ձիթապտղի բուրավետացված յուղ, դռների փակման հոդակապ, բազմաֆունկցիոնալ ականջակալներ և այլն) դասակարգման հիմնահարցերի քննարկում և մոտեցումների մշակում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Օրակարգերում ընդգրկված խնդրահարույց ապրանքների դասակարգման վերաբերյալ քննարկումներին մասնակցություն, մեր դիրքորոշման, մոտեցումների ներկայացում, ամփոփում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Օրակարգում ընդգրկված խնդրահարույց ապրանքների դասակարգման վերաբերյալ միանման մոտեցումների մշակման անհրաժեշտության նպատակով ԵԱՏՄ ՄԾՄԿ աշխատանքային խմբի աշխատանքների շրջանակներում ներկայումս մշակվում են առանձին տեսակի ապրանքների դասակարգման վերաբերյալ ԵԱՏՄ ՄԾՄԿ որոշումների նախագծեր, որոնց ընդունմամբ դրանք տեղ կգտնեն ազգային նորմատիվ ակտերում դասակարգման վերաբերյալ պարզաբանումների տեսքով, որոնք կնպաստեն ապրանքների միատեսակ դասակարգմանը: Հարկ է նշել, որ նշված աշխատանքային խմբի գործունեության շրջանակներում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում և լայն թափ է հավաքում Համաշխարհային մաքսային կազմակերպության Ներդաշնակ Համակարգի կոմիտեի տարբեր նստաշրջաններում ընդունված որոշումների կիրարկման նպատակով ԵԱՏՄ ՄԾՄԿ որոշումներում դրանց ընդգրկումը, որոնք այնուհետև արտացոլվում են ազգային օրենսդրության մեջ (ՀՀ ՊԵԿ պարզաբանումների տեսքով) և այդպիսով հասանելի են դառնում ԱՏԳ իրականացնողների առավել լայն շրջանակների համար:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ԵԱՏՄ ՄԾՄԿ-ին կից՝ ապրանքների դասակարգման հարցերով աշխատանքային խմբի գործունեությունը ենթադրում է խնդրահարույց հանդիսացող առանձին տեսակի ապրանքների դասակարգման վերաբերյալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի կամ ԵԱՏՄ ՄԾՄԿ որոշումների նախագծերի մշակում և ընդունում անդամ-պետությունների մաքսային ծառայությունների կողմից ներկայացված ապրանքների մասով:

Նման նախագծերը ամփոփվում են՝

- ԵԱՏՄ ՄԾՄԿ որոշումների տեսքով (բոլոր անդամ-պետությունների միաձայն համաձայնության դեպքում), որոնց հիման վրա ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 21-րդ

հոդվածին համապատասխան՝ հրապարակվում են առանձին տեսակի ապրանքների վերաբերյալ ԵԱՏՄ անդամ-պետությունների մաքսային մարմնի պաշտոնական պարզաբանումների տեսքով: Այդպիսի որոշումները կոչված են ապահովելու ապրանքների **միատեսակ դասակարգումը** կամ

- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշումների տեսքով (կոնսենսուսի բացակայության դեպքում), որոնք պարտադիր են բոլոր անդամ-պետությունների համար:

Միաժամանակ, ՌԴ դաշնային մաքսային ծառայության կողմից առաջարկ է ներկայացվել դիտարկել նշված աշխատանքային խմբի ընդլայնման նպատակահարմարությունը՝ ապրանքի ծագմանն առնչվող հարցեր ներառելու միջոցով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Տիգրան Գաբրիելյան՝

Արամ Սայամյան՝

27.11.2023թ.